Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Թամարա Ալեքսանյան tamaraaleksanyan0302@gmail.com
Հետազոտության թեման	Հայ ժողովրդի ծագումնաբանության հարցը (10-րդ դաս.)
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող	Լիա Կարապետյան Գեղամի Պատմաբան/Միջազգայնագետ 093639212 lilikar@list.ru
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Բ. Ժամկոչյանի անվան թիվ 119 ավագ դպրոց Տիգրան Մեծ 64 010573740 ecole@119mail.ru

Բովանդակություն

Ներածություն - 2
Հիմնական բովանդակություն - 5
Եզրակացություններ - 14
Օգտագործված գրականության ցանկ - 18

Ներածություն

Թեման ընտրելիս հաշվի եմ առել թեմայի արդիականությունը և ժամանակակից հասարակության առջև ծառացած մի շարք կարևորագույն խնդիրներ: Արդի հասարակության համար կարևորագույն խնդիրներից է բարոյական, ազգային հասարակական նորմերի ժիշտ արժևորումը և նոր սերունդների դաստիարակության գործում դրանց կիրառումը:

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել մեր ժողովրդի պատմության և անցյալի ժառանգությունն ու փորձը, պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ:

Հայերն աշխարհի հնագույն ժողովուրդներից են, որոնց պատմությունը մոտ երեք հազար տարի է: Այդքան երկար տարիների ընթացքում հայությունը բազմիցս ապրել է իր պատմության ողբերգական ժամանակաշրջաններ, աննախադեպ բարգավաճման և ստեղծագործ աշխատանքի ժամանակաշրջաններ՝ օժտելով համաշխարհային

քաղաքակրթությանը նյութական և հոգևոր մշակույթի հրաշալի գլուխգործոցներով :

Նպատակը և հետազոտական հարցը	Նպատակը՝ հայ ժողովրդի ծագումնաբանության հարցը աշակերտների հետ ուսումնասիրել և արձանագրել, որ հայերի գենետիկական պատմությունը սկիզբ է առել մոտ 5-7 հազար տարի առաջ, երբ սկսել է առանձնանալ հնդեվրոպական ընտանիքից հայերենը՝ որպես առանձին լեզու, ապացուցել, որ հայերը բնիկ ժողովուրդ են Հայկական բարձրավանդակում, զարգացնել սովորողների ինքնաճանաչողությունը և ձևավորել նրանց ազգային եւ քաղաքացիական գիտակցությունը, զարգացնել՝պատմական իրադարձությունները, երևույթները, փաստերը, դրանց փոխկապակցվածությունն ու պատճառահետևանքային կապերը համեմատելու և մեկնաբանելու կարողություններ և հմտություններ: Հարցը հետևյալն է՝ Ի՞նչ մեթոդներով կարելի է ուսուցանել հայ ժողովրդի ծագումնաբանության հարցը 10-րդ դաս.-ում սովորողների ինքնաճանաչողությունը զարգացնելու համար:

Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	1. Որոնողա-հետազոտական և վերլուծական կարողունակություն 2. Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	10-րդ դասարան 13 աղջիկ 3 տղա
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	հարցադրումների մեթոդ; համագործակցություն; զրույց-քննարկում; հարցման մեթոդ, հարցաթերթ; թվային տեխնոլոգիաների կիրառում:
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	14 20 09 09 23 23

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ • Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, • Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **Պարտադիր է կատարել հղում աղբյուրին**	1. Դյակոնով Ի.Մ. Հայ ժողովրդի նախապատմությունը. Հայկական լեռնաշխարհի պատմությունը մ.թ.ա. 1500-մ.թ.ա. 500 թթ. Խուռիներ, լուվիացիներ, նախահայեր 2. 5.Երեմյան Ս.Տ.. - Երևան: Հայկական ԽՍՀ, 1968. - 266 էջ - 1000 օրինակ 3. Ռեդգատ Ա.Ե. Հայերը. - Օքսֆորդ: Բլաքվել, 1998. - 332 էջ. - ISBN 0-631-14372-6 4. Շնիրելման Վ.Ա. Հիշատակի մարտիկներ: Առասպելներ. քաղաքականությունը Անդրկովկասում / Ալաեվ Լ.Բ. - Մ.: Ակադեմիական հրատարակություն, 2003. - 592 էջ - 2000 օրինակ - ISBN 5-94628-118-6
Հետազոտության ընթացքը	Հետազոտությունն իրականացրել եմ բնականոն ուսումնական միջավայրում և ուսումնասիրության օբյեկտ է եղել այն դասարանը, որտեղ իրականացվել են հետազոտական դասաժամերը: Հետազոտական աշխատանքի շրջանակներում կատարվել է ընդգրկված դիտարկում իմ կողմից, այսինքն,

շեշտադրելով դասավանդման գործընթացի խնդրահարույց կողմերը և ուսումնասիրելով դրանք, միաժամանակ հանդիսացել եմ այդ գործընթացի անմիջական մասնակիցը և համագործակցության մեջ եմ եղել աշակերտների հետ փորձնական դասաժամերի ընթացքում: Նման դասերը նպաստում են բացահայտելու հայրենիք հասկացության իմաստը և բոլոր այն հոգևոր արժեքները, որոնցով հարուստ է մեր հայրենիքը: Դասի բովանդակությունը ներառում է ավելի շատ պատմական նյութ: Աշակերտները ծանոթանում են իրենց ժողովրդի ծագման պատմությանը, ավանդույթներին, ծեսերին, լեգենդներին, հերոսական սխրանքներին: Հին ժամանակների պատմությանը վերաբերող ճշմարտությանը ծանոթանալով, սովորողները ձեռք են բերում ճանաչողական,քննադատական,և ստեղծագործական ունակություններ, հպարտությամբ են տոգորվում մեր նախնիներով, ովքեր կարողացել են պաշտպանել խաղաղությունն ու անկախությունը: Լեզվական, հնագիտական, մշակութային փաստերի տրամաբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս ճիշտ պատկերացում կազմելու հայերի ծագման ու հնագույն պատմության գլխավոր դրվագների մասին:

Տվյալների հավաքագրումը կատարվել է դիտարկման և աշակերտների հարցման միջոցով:

Սովորողների ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ձևերը

Ուսուցման գործընթացում մեծ նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք: Այն իր մեջ ներառում է վեց հիմնական փուլեր.

1. կազմակերպչական. Նախապատրաստել աշակերտների աշխատանքային միջավայրը: Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը կարևորագույն պայման է արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:
2. բառարանների, հուշաթերթիկների բաշխում, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում: Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը կարևորագույն պայման է արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:
3. նախապատրաստական. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ ևս հիշեցնում է աշակերտներին չխանգարել ընկերներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել և այլն, այսինքն՝ այն ամենը, ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:
4. կողմնորոշիչ. Այս փուլում ուսուցիչը ծանոթացնում է առաջադրանքի

	բովանդակությանը: Աշակերտը, ստանալով առաջադրանքը, ընթերցում կամ վերընթերցում է պայմանը, դիտարկում է առարկան, ընթերցում է տեքստը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողն իմաստավորում է առաջադրանքը, առանձնացնում է, թե ինչ է տրված, թե ինչ պետք է իմանալ կամ կատարել, ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջվում աշխատանքի կատարման համար: Սովորողները ծանոթանում են հուշաթերթիկի բովանդակությանը: Բացի դրանից, այս փուլում,ուսուցիչը կարող է բաշխել աշխատանքի պլանը:Պլանը կարելի է գրառել նաև գրատախտակին: Գրատախտակին փակցվում է նաև թեմայի շուրջ մշակված պաստառները, սխեմաները և այլն:Այս փուլում ձևավորվում է ուսումնական աշխատանք ծավալելու կարևորագույն կարողություններից մեկը՝ աշխատանքի համար կարևոր նյութեր ընտրելու կարողությունը: 5. հիմնական փուլ. Ալս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը: 6. ամփոփիչ փուլ.Այս փուլում կատարվում է անցուդարձ:Ուսուցիչը գնահատում է, քննարկում է, վերլուծում ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները: Նպատակահարմար է առաջադրանքի կատարման ստուգման համար առանձնացնել ևս մեկ կառուցվածքային փուլ՝

	7. ստուգիչ փուլ, որի ընթացքում աշակերտը կատարելով առաջադրանքը՝ինքն իր սեփական նախաձեռնությամբ ստուգում է իր աշխատանքը և գնահատում այն,այսինքն՝ իրականացնում է ինքնաստուգում և ինքնավերահսկում: Իսկ հիմա փորձենք այս ամենը վերածել հետազոտական աշխատանքի: << Զանգակ>>հրատարակչության հրատարակած 10-դասագրքում զետեղված <<Հայոց ծագումնաբանության հարցը>>թեմայի ուսումնասիրության ընթացքում իմ առջև դրված նպատակներից է աշակերտների մեջ ձևավորել ազգային արժանապատվություն և սերն առ սեփական հայրենիքը: Դասը սկսել ենք գրատախտակին գրելով հայրենիք բառի վերլուծությամբ:Աշակերտներին բաժանվել են թերթիկներ, որոնց վրա նրանք գրելու են հայրենիքի վերաբերյալ իրենց մտքերն ու ունեցած գաղափարները:Այնուհետև այդ թերթիկները փակցվում են գրատախտակին և ընթերցվում են ու քննարկվում: Նոր հյութի հաղորդումը կատարվել է ՏՀՏ-ի միջոցովհամապատասխան նկարների, քարտեզների և գծագրերի

ցուցադրությամբ:


The Manner how the Whole EARTH was Peopled by NOAH & his Descendants after the FLOOD.
HEBREWS
ASIA
EUROPE
NOAH
AFRICA
ARMENIA
The Mountains of ARARAT
Engraved for the Universal Magazine 1749 for S. Hinton at the Kings Arms in St Pauls Church Yard London.

Orbis Hecatæi
circa 500 ante Christ.
Amalchium Mare
SCYTHÆ
CELTÆ
Ligyes
IBERI
Mare Caspium
ARMENIA
FRYGIA
MEDIA
LIBYA
ÆTHIOPES
Pygmæi



	

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Տվյալ հետազոտական աշխատանքի շրջանակներում նպատակ եմ ունեցել. Գործնական միջավայրում կիրառել ժամանակակից մեթոդների՝ համագործակցություն, ՏՀՏ, հարցադրումներ, զրույց-քննարկում և

	այլն, ընձեռած հնարավորությունները սովորողների հետաքրքրվածության մակարդակը բարձրացնելու, նրանց ակտիվ ուսումնառության մղելու, նրանց՝ որպես հասարակական կյանքում կարևոր դերակատարում ունեցող անհատների ձևավորման համար: Վերլուծել իրականացված փորձնական դասաժամի արդյունքները՝ ուսումնասիրվող խնդրի համատեքստում: Աշակերտներին հանձնարարվել էր անհատական հետազոտական 3 աշխատանք հետևյալ թեմաներով՝1.Հայերի մասին ավանդազրույցներ, 2.Հայկական ծեսեր 3.Հայերիհերոսական սխրանքներ: Հետևյալ թեմաները ներկայացնելուց հետո, աշակերտները, որպես թեմայի ամփոփում, գրատախտակի վրա շարունակել են հետևյալ նախադասությունը՝ <<Հայրենիքն ինձ համար>>: Հարցերի միջոցով աշակերտների հետ պարզել ենք թե որքանով է ուսումնասիրված թեման նպաստել նրանց ինքնաճանաչողությանը: Հարցերի բովանդակությունն ուղղված էր գնահատելու աշակերտների ձեռք բերած վերլուծական, քննադատական, ստեղծագործական կարողությունների մակարդակը: . Աշակերտից պահանջվել է, որ վերլուծի հայ ժողովրդի ծագման մասին ավանդապատումները՝ ներկայացնի դրանց ազդեցությունը իր ինքնության ձևավորման վրա:

	Վերլուծի տեղանքի ու իրադարձությունների, պատմաաշխարհագրական տեղանունների հետ կապված ավանդապատումները: Գնահատի ազգային հոգևոր-մշակութային արժեքները՝ որպես համամարդկային արժեքներ: Մեկնաբանի և կիրառի զանազան քարտեզներ: Վերլուծի հայ ժողովրդի ծագման մասին ավանդապատումները՝ ներկայացնի դրանց ազդեցությունը իր ինքնության ձևավորման վրա: Նկարագրի պատմական և մշակութային գործիչներին, նրանց գործունեությունը քրիստոնեության ընդունման և տարածման գործում: Ներկայացնի Հայկական լեռնաշխարհի նշանավոր հնավայրերը, Հայկական լեռնաշխարհը որպես մարդկության և հայոց քաղաքակրթության զարգացման հնագույն բնօրրան լինելու փաստեր: Ներկայացնի Հայաստանի մասին վկայություններ, հայերի տեղաբնիկ ծագումնաբանությունը վկայող փաստեր, համեմատի հայերի ծագումնաբանության վերաբերյալ տարբեր տեսություններ, ավանդազրույցներ: Ներկայացնի Ք.ծ.ա. III-I հազ հայկական

	քաղաքակրթության պատմության առանցքային դրվագները: Հետազոտի իրենց տարածաշրջանում գտվող պատմաաշխարհագրական որևէ տեղանք կամ Ք.ծ.ա. III-I հազ. հնագիտական հուշարձան, փորձի կապեր գտնել ներկա իրողությունների հետ Արժևորի անկախ ու զորեղ պետություն ունենալու, պատմական փորձի, ձեռքբերումների յուրացման ու հաջորդ սերունդներին փոխանցման անհրաժեշտությունը Գնահատի Հայկական լեռնաշխարհի հնագույն պետական կազմավորումների տեղն ու դերը Հին Արևելքի քաղաքակրթությունների համակարգում և հայոց պատմության մեջ:
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, 1981
2. Դյակոնով Ի.Մ. Հայ ժողովրդի նախապատմությունը. Հայկական լեռնաշխարհի պատմությունը մ.թ.ա. 1500-մ.թ.ա. 500 թթ. Խուռիներ, լուվիացիներ, նախահայեր
3. Երեմյան Ս.Տ.. - Երևան։ Հայկական ԽՍՀ,1968. - 266 էջ - 1000 օրինակ
4. Ռեդգատ Ա.Ե. Հայերը. - Օքսֆորդ։ Բլաքվել, 1998. - 332 էջ. - ISBN 0-631-14372-6
5. Շնիրելման Վ.Ա. Հիշատակի մարտիկներ։ Առասպելներ. քաղաքականությունը Անդրկովկասում / Ալաեվ Լ.Բ. - Մ.: Ակադեմիական հրատարակություն, 2003. - 592 էջ - 2000 օրինակ - ISBN 5-94628-118-6
6. Ռ, Ա.Իշխանյան,Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան, << Հայաստան >>1988

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր ● Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ) ● Նկարներ ● Արդյունքներ	